

մամբ թե զգացմամբ թրթռուն հույժ շահեկան ինքնագիր գրություն մը կարդաց:

Ստեղծված խանդավառ մթնոլորտին ոգեվորված հաղորդաբար խոսք առին Հունաստանն տեղա ժամանած Պ. Կ. Խանիկյան և ընկեր Ալ. Սարուխան, առաջինը իր հյուրի հանգամանքով, իսկ երկրորդը զեկուցում մը ընելու... պատրվակով:

Պ. Խանիկյան հայտարարեց, իր խոսքը երիտասարդներուն ուղղելով, «Մենք առենոր հայրենիք գացինք կռվելու, «Կոռնկա»-ը երգելով: Դուք պիտի ապրիք ավելի ոգևորիչ օրեր. ապագան ձերն է, դուք հայրենիքներ պիտի ըլլաք: Հաղորդակից եղեք Հայաստանի ոգիով, և սրտով պատրաստ եղեք միշտ Հայրենիքի ներգաղթի կոչին պատասխանելու համար: Դուք ալ «Կոռնկա»-ը երգեցիք. պատգամավորները ձեզի Հայաստանն հուսալից խապրիկներ բերին. ես ալ ձեզի հետ կը համբուրեմ այս նվիրական հողը»:

Ընկեր Ալ. Սարուխան սրտմտութեամբ հայտնեց թե իրենք ալ երիտասարդ են և երիտասարդներուն հետ հաղորդակցան այդ երեկո, նկատելով, որ երիտասարդությունը սրտին մեջ է և ոչ թե տարիքին...: Հետո ավելի ծանրանալով Գեր. Տ. Մամբրե Գալֆայանի մեկ հայտարարության Հայաստանի մեջ կռիւի գործածության մասին, ընկեր Սարուխան ամենեւնի ծայրահեղ պարագան իսկ պահ մը իրականությունն ենթադրելով՝ ուժգնորեն դատապարտեց այդ տիրող ոգին և ավելցուց:

Արաբական առածը կըսես. «Կը գանգատեի կռիւի շունենալու համար մինչև այն օրը ուր հանդիպեցա ուրիշ մեկու մը որ ոտք չունեի...»: Նախորդ համաշխարհային պատերազմին, հայ ժողովուրդը ոչ միայն կռիւի շունեի, այլ ոտքը կոխելիք տեղ մըն

ալ չունեի: Եկած է փառահեղ հարությունը մեր ազգին, այնքան տառապանքներն ետք:

Հետո, ընկեր Սարուխան հայտարարեց թե երկու հեռագիր պիտի հղվին օրվան ժողովոյն կողմէ, մին Ս. Էջմիածնի և մյուսը Հայաստանի վարչապետ Պ. Մացակ Պապանի ուղղված: Այս զեկուցումը ընդունվեցաւ անվերջանալի և փոթորկոտ ծափահարություններով:

Խոսքը տրվեցաւ Հարավային Ամերիկայի առաջնորդ Գեր. Տ. Գարեգին Արք. Խաչատուրյանի, որ հայտնեց թե առանց ստորագնահատելու օրվան հանդիսության մյուս խոսողները, ինք ամենեւնի ավելի տպավորված էր Պ. Ա. Յազըճյանի ինքնագիր գրությունն, ուր լավագոյն կերպով բացատրված էր հողին խորհուրդը:

Հետո հակիրճ կերպով ալ ուժեղապես Հայաստանն իր տպավորությունը հայտնեց:

«1922 ին զլացած էի հոն. այսօր չհանըքա Հայաստանը, այնքան! բարեփոխված գտա զայն: Եթե հանկարծ իջեցնեին զիս Երևան և հարցնեին. «Ուր կը գտնուիս», պիտի շփարեանայի պատասխանել»:

Եզրապատահայ Թեմին Առաջնորդ Գեր. Տ. Մամբրե Արք. Սիրունյան հրափրվեցաւ իր փակման խոսքը ըսելու:

Սրբազան Հայրը խոսելի ետք շարունակեց. «Հանդիսականներու այսքան հոծ բազմության մը առջև չէի եղած երբեք: Արդարեւ այս երեկո աներեւոյթ բազմություն մը ներկա է: Հյուսիսային և Հարավային Ամերիկայի կրօնական ներկայացուցիչները բազմահազար Հայերու ներկայությունը կավելացնեն ձեր վրաս»:

Հանդիսությունը վերջ գտաւ Պահպանիչաւ և ամենուն կողմէ երգված «Հայր Մեր»-ով:

ՍԻՓԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԵՆ ԲԵՐՎԱԾ ՆՈՂԸ

(Կալիֆորնիո թեմի աշխարհական պատգամաւոր Առաքել Յազըճյանի հողի հանձման հանդեսի առթիւ խոսած ուղերձից):

Մեր երկրագունդին վրա ամենեւնի շատ բանը և ամենեւնի շատ փնտռված բանը հողն է: Հողն շինվեցաւ մարդը, հողը մշակեց մարդը՝ իր գոյությունը պահելու

համար: Հողին համար կռվեցան թե՛ բարբարոս մարդը, թե՛ քաղաքակիրթ մարդը. երկուքն ալ ուժասպառ ու հյուծյալ ինկան հողին մեջ: Կտոր մը ավելի նյութ ունենա-

լու տեղն էր բռնվող աղահամարդուն ափ մը հողը աչքը կը կշտացնէ կըսենք, ինչ որ ճիշտ է՝ Մարդկութիւնը ինչ կրօնի ալ համար, իր երախտագիտական մատուցումը կընեն հողին, ծովը կամ զայն համարուելով:

Մեր մամիկները անցյալին մեջ հողին վրա կը պառկեցնէին իրենց նորածինը, որպէսզի անկէ ուժ առնելու ներկայիս մեր սօսովները լեռը կը դրկենք հողին վրա պառկելու, որպէսզի անողջ, չարքաշ մեծանան, հողին շինված մարդուն պարտադրած շարիքները դիմագրավելու համար: Իր անցյալը հարգել գիտցող ազգին սրբութիւնը սրբոցնէ՛լ հողը, քանզի իր նախահայրերու նշխարները բովանդակողն է: Ազգերու այն զավակները, որոնք հեռացած են իրենց մայրենի՝ հողին, կը շարունակեն մնալ հեռավոր հայրենիքին զավակները՝ երբ իրենց նոր հաստատված տեղերը հողին կառնած են, փակ անոնք, որոնք հողին զատված ու քաղքենի կյանքը ընտրած են, անարյուն ջարդը մարդած է զիրենք ու հակառակնապես տնհարտացուցած: Այսպէս եղանք մենք Հունգարիոյ մեջ, Լեհաստանի մեջ. այսպէս լիտիւ ըլլանք դեռ ուրիշ տեղեր: Ոչ կրօնը, ոչ դավանանքը և ոչ ալ նոր համատեմք մը կրնան փրկել կորուստեւ Հողին փարիլը ոչ միայն հայրենասիրութիւնն է, այլ և դոյութեան ու ոչ գոյութեան հարց մը: Իզուր չէր, որ մեր թագավորներին մին, Արշակ, կաղանկավորված ներկայացած զինք գերեւորող Շապուհին, երբ Հայաստանին բերված ու գետինը փռված հողին վրա կեցավ, անոր վրա փր խորխորութիւնը վերստացավ և հրամայեց զինք գերեւորողին, որ վար իջնէ դահեն, զայն տալու համար իրեն:

Այսօր մեզի ներկայացուցած՝ մորմն զատված ափ մը հողը մեր նոր Հայրենիքն է, նոր իմաստ մը ունի հասունցած տարիք ունեցողին, նոր պայծառ մը ունի մեր երիտասարդ մանչին ու աղջկան: Աչքերդ վեր վերցուր, ո՛վ երիտասարդ, տե՛ս հպարտ Արարատի փեշերուն ծաղկող Հայրենիքը. անոր մեկ մասնիկն է այս հողը. ուժ առ անկէ. անցյալի փառք տես անոր մեջ, ներշնչումի աղբյուր ընտրե՛ր զայն. ցնդիդ

հավերժացման խորհրդանշը նկատե՛ր զայն, բու բովանդակ էութեամբ ՍԻՐԷ զայն: Գործն՝ տքնե՛ր ու շարշարվե՛ր անոր համար. սրտիդ մեջ նոր տաճարներ շինե՛ր անկէ, կենսունակ է անկէ, կենսունակութեամբ այն հողամասին, որ կէ բերված է: Հոն, ազգդ կապրի անոր վրա, բեգի համար: Թերահամար մի ընար անոր ուժին ու գեղեցկութեան մասին: Աստված անգամ հողին ալիքի արժեքավոր բան մը չգտավ՝ իր պատկերը ներկայացնելու մեզի: Ներգործող ուժ մը է ան: Ապերախտ չէ, ան տահմանված է շտեմարան բարեաց ըլլալու: Վայ անոր, որ ցորենի տեղ տառասկ կը սերմանէ անոր մեջ ու փոխան ծաղկի փուլ:

Անոր մեջ աճող վարդն ու մեխակը իրենց բույրով ու դուլով Աստվածահաճո են. Անոր հանդէպ ունեցած սերդ պաշտամունքով խանձարուե՛ն: Այս մորմն զատված տիկուր, սակայն միանգամայն խոսուն ու զվարթ, կյանքով առի ափ մը հողը, տեսավ անգարծ անցյալին մեջ կոտորակումը և զուլումը ցնդիդ. այլոց քաղաքակրթութիւն մը ապահովելու սիրուն նախահայրերուդ արյունով ներկվեցաւ: Վեր վերցուր զուլիդ. անգամ մը ևս լալ դիտե՛ր զայն, նոր սրտգամ մը կուտա. լսե՛ր նոր երիտասարդներու վազքին ու խորոխ: Բարվածքին ձայնը, լսե՛ր ալիքի քան երբեք ուրախ երգերու ձայնը, լսե՛ր հոսող ջուրերուն աղէկ լուսին և ուժին հարուստներ. տե՛ս, տե՛ս անոր զավակներուն իմաստուն զեկավարութիւնը. փոխան վարազ, աղմկաւար ազգասիրութեան տե՛ս գուսպ ու խորունկ ազգասիրութեամբ ճրմարիտ հայրենասերներու կերտումը: Վերցու՛ր այդ հողը. գորգուրա՛ն անոր վրա, պահե՛ր զայն սրտիդ ծալքերուն մեջ, քահանայիդ կապե՛ր անոր, օր մը, մեզի համար անտրոշ օր մը, երբ վերադարձի ձայնը լըսես, ուխտավորի մը պէս Հայրենիքդ դարձիր ու այդ հողը հետդ տար մորը հանձնե՛ր գալն. պինդ բազուկով աշխատե՛ր անոր վրա՝ ՎԱՍՆՁԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԷ ԿԱՐԳԱՆՈՍԸ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՒ. ապրելու հույսդ դիւր անոր վրա, ապերախտ չէ, փրկութիւնդ իսկ է, ապրե՛ր անոր սիրով, ապրե՛ր անոր վրա որպէսզի մեա՛ն առ հալկե՛ն:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(Հողը ստացող երիտասարդութեան աւուները՝ Հ. Կեռչեւյանի խոսած ուղերձից):

Շատ մը հանդեսներու, երեկույթներու և կուսակցական արարողութեանց ներկա դտնված ենք այս սրահին մեջ, բայց չեմ

խորհրդ թե անոնցմէ որն է մեկը, ունեցած ըլլա այն խորին ու վսեմ նշանա. կուսիւնը զոր այս երեկոյանը ունի, Ձե-